

7-րդ դասարան /առաջին փուլ/

Տարբերակ 1

1. Գտնել $\left| -2\frac{3}{5} - \frac{2}{5} : 0,15 \right|$ արտահայտության արժեքը:

- 1) 20 2) $5\frac{4}{15}$ 3) $\frac{1}{15}$ 4) 8

2. 5սմ երկարություն և 3սմ լայնություն ունեցող ուղղանկյան մակերեսը $2n^2$ -ու n° մասն է կազմում:

- 1) 0,075 2) 7,5 3) $\frac{3}{4}$ 4) $\frac{3}{80}$

3. Գտնել 200-ի բոլոր բաղադրյալ բաժանարարների քանակը:

- 1) 8 2) 10 3) 9 4) այլ պատասխան

4. Գտնել 1, 2, 3 թվանշաններով գրվող բոլոր կանոնավոր կոտորակների քանակը, եթե յուրաքանչյուր կոտորակը գրելիս նշված թվանշանները օգտագործվեն մեկից ոչ ավելի անգամ:

- 1) 2 2) 4 3) 7 4) 9

5. Տրված են երեք թվեր: Առաջին թիվը երկրորդից փոքր է 25%-ով, իսկ երրորդ թիվը առաջինից փոքր է 20%-ով: Քանի՞ տոկոսով է երկրորդ թիվը երրորդից մեծ:

- 1) 40 2) 56,25 3) 45 4) այլ պատասխան

6. 13-ից փոքր ամբողջ թվերի քանի՞ զույգ կա, որոնց արտադրյալը հավասար է 50-ի ((a,b) թվագույգը համարել (b,a) թվագույգից տարբեր):

- 1) 16 2) 1 3) 2 4) 8

7. Գտնել 7-ից փոքր թվանշաններից կազմված 3-ի բազմապատիկ եռանիշ թվերի քանակը, որոնց թվանշանները դասավորված են աճման կարգով:

- 1) 6 2) 7 3) 8 4) այլ պատասխան

8. Դուրս գալով միևնույն A կետից՝ երկու մարմին սկսեցին հավասարաչափ շարժվել շրջանագծով: Առաջին մարմնի արագությունը 10մ/վրկ է, իսկ երկրորդինը՝ 15մ/վրկ: Շարժումը սկսելուց 30 վրկ հետո մարմինները հայտնվեցին A կետում: Քանի՞ մետր է շրջանագծի երկարությունը, եթե այդ մարմինները միասին կատարել են ոչ ավելի քան 6 պտույտ:

- 1) 75 2) 50 3) 200 4) այլ պատասխան

9. Շենքի բնակարանները համարակալելու համար 7 թվանշանը օգտագործվել է 42 անգամ: Ամենաքիչը քանի՞ բնակարան ունի այդ շենքը:

- 1) 217 2) 197 3) 220 4) այլ պատասխան

10. Բնական թիվը 7-ի և 8-ի բաժանելիս ստացված մնացորդների գումարը հավասար է 12-ի: Գտնել ստացված հնարավոր մնացորդների արտադրյալը:

- 1) 35 կամ 36 2) 36 3) 35 4) 32, 35, 36

11. Խաղոսկրը (զառը) գցել են երկու անգամ: Ինչի՞ է հավասար հավանականությունն այն քանի, որ ստացված թվերի գումարը կլինի 6-ին բազմապատիկ:

- 1) $\frac{1}{6}$ 2) $\frac{3}{4}$ 3) $\frac{1}{8}$ 4) $\frac{1}{12}$

12. Նավակը գետի հոսանքի ուղղությամբ 90կմ-ն անցնում է 3 ժամում, իսկ հոսանքին հակառակ ուղղությամբ 80կմ-ը՝ 4 ժամում: Եթե նավակն ու լաստը միաժամանակ A վայրից շարժվեն հակառակ ուղղություններով, ապա քանի՞ ժամ հետո նրանց միջև եղած հեռավորությունը կլինի 50կմ:

- 1) 2 2) 2,4 3) $\frac{12}{7}$ 4) 1,2

13. Գրատախտակին գրված է 1234554321 թիվը: Ձնջել մեկ թվանշան այնպես, որ ստացվի 9-ի վրա բաժանվող հնարավոր ամենամեծ թիվը: Գտնել ստացված թվի վերջին երեք թվանշանների գումարը:

- 1) 6 2) 7 3) 8 4) 9

14. 8 ընկերներ որոշեցին կազմակերպել շախմատի մրցաշար: Քանի՞ խաղ խաղացվեց, եթե նրանցից յուրաքանչյուրն ամեն մեկի հետ խաղաց մեկ խաղ:

- 1) 56 2) 28 3) 8 4) 7

15. Գտնել բոլոր կենտ թվանշանների գումարի հակադիր թիվը:

- 1) $\frac{1}{25}$ 2) -25 3) -24 4) $\frac{1}{24}$

16. Ջրով լիքը լցված տակառից սկզբում դատարկեցին ջրի $\frac{1}{4}$ մասը, իսկ հետո՝ ամբողջ տակառի 10%-ը: Դրանից հետո տակառում մնաց 26լ ջուր: Քանի՞ լիտր է տակառի տարողունակությունը:

17.

			17				20				
--	--	--	----	--	--	--	----	--	--	--	--

Դատարկ վանդակները լրացնել այնպես, որ յուրաքանչյուր երեք հարևան վանդակների թվերի գումարը լինի նույնը, իսկ բոլոր թվերի գումարը հավասար լինի 200-ի: Գտնել 17 թվի երկու հարևան թվերի արտադրյալը:

18. Պարի մրցույթին մասնակցում էին 22 երեխաներ: Առաջին աղջիկը պարեց 7 տղաների հետ, երկրորդ աղջիկը՝ 8 տղաների հետ, երրորդը՝ 9 տղաների հետ և այդպես շարունակ: Վերջին աղջիկը պարեց բոլոր տղաների հետ: Քանի՞ տղա էր մասնակցում մրցույթին:

19. Երկու հայելային թվերի արտադրյալը հավասար է 65125-ի: Գտնել այդ թվերի գումարը: Երկու թվեր կոչվում են հայելային, եթե մեկը մյուսից ստացվում է թվանշանների հակառակ դասավորելիս (օրինակ՝ 123-ը և 321-ը):

20. Չորսից փոքր թվանշաններով քանի՞ եռանիշ թիվ կարելի է կազմել այնպես, որ հարևան թվանշանները լինեն իրարից տարբեր: